# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը, որոնք այսուհետև անվանվելու են Կողմեր,

հաշվի առնելով քաղաքական նոր իրողությունները աշխարհում և Անդրկովկասյան տարածքաշրջանում, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կողմից պետական ինքնուրույնության ձեռք բերումը,

ելնելով միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմաների վրա հիմնված բարեկամական հարաբերություններ ու փոխշահավետ համագործակցություն զարգացնելու մտադրությունից,

ճանաչելով իրենց պետական սահմանի պահպանության համար միջոցներ ձեռնարկելու՝ բոլոր անկախ պետությունների անքակտելի իրավունքը, ղեկավարվելով անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կոլեկտիվ անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ,

կամենալով պայմանագրային հիմք ստեղծել Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի գտնվելու և նրանց կողմից Թուրքիայի ու Իրանի հետ սահմանը պահպանելու համար,

համաձայնվեցին ներքոհիշյալի մասին:

### Հոդված 1

Սույն Պայմանագրի նպատակների համար ներքոհիշյալ տերմինները նշանակում են.

1. ,,Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքեր,,՝ Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի միավորումներ, զորամասեր ու ստորաբաժանումներ:

2. ,,Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձինք,,.

ա) Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի զինծառայողներ,

բ) Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների թվից քաղաքացիական այն անձինք, որոնք աշխատում են Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի զորամասերում, հիմնարկներում, կազմակերպություններում ու ձեռնարկություններում:

3. ,,Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց ընտանիքների անդամները,,` ամուսին, երեխաներ, ինչպես նաև համատեղ ապրող ու խնամքի տակ գտնվող ազգականներ:

4. ,,Տեղաբաշխման վայրը,,` այն տարածքը, որի վրա տեղավորվում են Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը, ներառյալ զորամասերի դասավորությունը` վարժական կենտրոններով, հրաձգարաններով և այլ օբյեկտներով, որ օգտագործում են Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը:

5. ,,Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի շարժական գույքը,,` սպառազինության, զինամթերքի, ռազմական տեխնիկայի բոլոր տեսակները, ներառյալ փոխադրամիջոցները, ինչպես նաև զորքերի ապահովման համար անհրաժեշտ ցանկացած այլ նյութական միջոցներ:

6. ,,Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի անշարժ գույքը,,` Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի զբաղեցրած հողակտորներ և դրանց վրա գտնվող զինվորական ավաններ, օդանավակայաններ, հրաձգարաններ և այլ շինություններ ու կառույցներ:

## Հոդված 2

Հայաստանի Հանրապետությունը, ի շահ սեփական անվտանգության, Ռուսաստանի Դաշնության անվտանգության և ԱՊՀ մասնակից պետությունների կոլեկտիվ անվտանգության ապահովման, իր տարածքի շրջանակներում Թուրքիայի և Իրանի հետ պետական սահմանի պահպանության հարցերը լիազորում է Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերին, որոնք սույն Պայմանագրի ստորագրման պահին տեղաբաշխված են Հայաստանի Հանրապետության տարածքում:

## Հոդված 3

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող և պետական սահմանը պահպանող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը իրենց գործունեության մեջ ղեկավարվում են Թուրքիայի և Իրանի հետ նախկին ԽՍՀ Միության ուժը պահպանող միջպետական պայմանագրերով, ԱՊՀ մասնակից պետությունների սահմանային հարցերի համաձայնագրերով, ,,ԽՍՀՄ պետական սահմանի մասին,, ԽՍՀ Միության օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի նորմատիվային ակտերով այն մասում, որը չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պահպանության իրենց գործողությունները Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը համաձայնեցնում են Հայաստանի Հանրապետության Նախագահի և Կառավարության հետ:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը հարգում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, պահպանում են տեղի օրենսդրությունը և թույլ չեն տալիս միջամտություն Հայաստանի Հանրապետության ներքին գործերին: Տեղի իշխանությունները հարգում են Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի, դրանց կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքի անդամների իրավական դրությունը և թույլ չեն տալիս որևէ գործողություն, որը դժվարացներ Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կողմից իրենց խնդիրների կատարումը: Նրանք ընդունում են անհրաժեշտ և Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի հետ համաձայնեցված միջոցառումներ, որոնք ապահովում են նրանց անվտանգությունը, ինչպես նաև զորքերի գույքի պահպանությունը, ներառյալ ամեն տեսակ հակաօրինական գործողությունների կանխման միջոցառումներ:

Թուրքիայի և Իրանի հետ սահմանի պահպանության հետ չկապված այլ խնդիրների կատարմանը (բացառությամբ տարերային աղետների, վթարների և այլ աղետների վերացման աշխատանքների) Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը չեն ներգրավվում:

## Հոդված 4

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմակերպական-հաստիքային կառուցվածքը սույն պայմանագրի ստորագրման պահին, նրանց տեղաբաշխման վայրերը պահպանվում են մինչև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև հատուկ համաձայնագրերի կնքումը:

Զորքերի կառավարումն ապահովելու նպատակով ստեղծվում է ,,Հայաստան,, Օպերատիվ խումբ:

Զորքերի համալրումն իրականացնում է Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի հրամանատարությունը:

Սեփական սահմանապահ կառուցվածքների ստեղծմանը համընթաց Հայաստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ղեկավարության հետ համաձայնեցնելով, հաջորդաբար իր պահպանության տակ է վերցնում Թուրքիայի և Իրանի հետ սահմանի հատվածները, կազմակերպելով դրանց պաշտպանությունը՝ Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի սերտ փոխգործողությամբ:

## Հոդված 5

Ի շահ Թուրքիայի և Իրանի հետ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պահպանության, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության պետական վարչության և մյուս իրավապահ մարմինների հետ փոխգործողությամբ տանում են օպերատիվ և հետախուզական աշխատանք, սահմանի խախտմանը վերաբերող գործերի նախաքննություն, կատարում են անհետաձգելի քննչական գործողություններ՝ Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական-դատավարական օրենսդրությանը համապատասխան:

Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի սահմանաներկայացուցչական գործունեությունն իրականացվում է Թուրքիայի և Իրանի հետ՝ սահմանի կանոնակարգի հարցերի վերաբերյալ գործող համաձայնագրերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության մասնակցությամբ և ընդհանուր ղեկավարությամբ:

## Հոդված 6

Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը, սահմանն անցնելու կանոնակարգը սահմանող օրենսդրական գործող ակտերին համապատասխան, իրականացնում են մարդկանց, փոխադրամիջոցների, բեռների, ապրանքների և այլ իրերի բացթողումը Թուրքիայի և Իրանի հետ Հայաստանի Հանրապետության սահմանի վրա գտնվող գոյություն ունեցող անցումային կետերով:

Անցումային նոր սահմանված կետերում ուղևորների և փոխադրամիջոցների՝ սահմանով երթևեկությունը բացում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը՝ այդ կետերի կառուցման (վերակառուցման) բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո, Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի հետ համաձայնեցված նախագծերով և դրանց գործունեության համար անհրաժեշտ ինֆրակառուցվածքի ստեղծումով:

## Հոդված 7

Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը սահմանի պահպանության մեջ օգտագործում են ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս տեղակայված ավիացիոն զորամասերի ուժերն ու միջոցները՝ ինչպես հիմնական օդանավակայաններից, այնպես էլ ժամանակավոր տեղակայման օդանավակայաններից (հարթակներից):

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է չխոչընդոտել Հայաստանի Հանրապետության օդային տարածությունում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ինքնաթիռների, ուղղաթիռների և թռչող այլ ապարատների թռիչքների իրագործմանը՝ թռիչքների համար սահմանված կանոնների պահպանումով:

Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ավիացիայի թռիչքների ապահովումը, ինչպես նաև օդանավակայանների, երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց կառույցների օգտագործումը՝ կապված սահմանի պահպանության հետ, իրականացվում է անհատույց:

## Հոդված 8

Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերի հաջորդական կազմավորման շահերից ելնելով, Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը, ըստ պատվերի և պայմանագրային հիմունքով, անհրաժեշտ օգնություն են ցույց տալիս, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերի համար, ազգային կադրերի պատրաստման գործում:

Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերի համար սպայերի, պրապորշչիկների ու միչմանների պատրաստումն իրագործվում է Ռուսաստանի Դաշնության ուսումնական հաստատություններում՝ Կողմերի միջև համաձայնությամբ: Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերի համար մասնագետների պատրաստումն իրագործվում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ուսումնական կենտրոններում:

## Հոդված 9

Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը կապահովեն Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամների քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ իրավունքներն ու ազատությունները ամբողջականությունը, ինչպես նաև օրինական շահերը՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամներին, զինծառայողներին իրավունք է վերապահում նրանց զորացրվելուց կամ պաշտոնաթող լինելուց հետո կամավոր կերպով ձեռք բերելու Հայաստանի քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում Կողմերը ելնում են այն բանից, որ Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերում զինվորական

ծառայության և Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ծառնարկու-թյուններում, հիմնարկներում ու կազմակերպություններում աշխատանքի ժամկետը համարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և կենսաթոշակային ապահովում ձեռք բերելու համար անհրաժեշտ ժամկետ:

## Հոդված 10

Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի միավորումների ու զորամասերի կենսագործունեության (բնակարան, կոմունալ ծառայություններ, բժշկական ապահովություն և այլն) ապահովումը իրականացնելու է Հայաստանի Հանրապետությունը, իսկ ֆինանսավորումն ու նյութատեխնիկական ապահովումը՝ երկու Կողմերի բաժնեմասային մասնակցությամբ, որի մասին Կողմերը կկնքեն առանձին համաձայնագիր:

## Հոդված 11

Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերին իրավունք է վերապահում օգտվելու զորանոցային և բնակելի ավաններից, օդանավակայաններից, ուսումնական կենտրոններից և սարքավորումով ու կայանքներով դաշտերից, բնակելի և այլ շենքերից ու կառույցներից, հողամասերից, երկաթուղային մերձատար ուղիներից, տրանսպորտներից, փոստային, հեռագրահեռախոսային ու ռադիոկապի միջոցներից, էլեկտրաէներգիայից, կոմունալ, շինարարական ու այլ ծառայություններից, որոնցից սույն Պայմանագրի ստորագրման պահին օգտվում են Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը:

Հիշյալ օբյեկտներից ու միջոցներից, ինչպես նաև տարբեր տեսակի ծառայություններից Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի օգտվելու կարգն ու պայմանները որոշվում են Կողմերի առանձին համաձայնագրերով:

## Հոդված 12

Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կողմից օգտագործվող կառույցների, շենքերի, զորանոցային և բնակելի ավանների, օդանավակայանների, ուսումնական կենտրոնների, ստացիոնար սարքավորումներով ու կայանքներով վարժական դաշտերի և այլ անշարժ գույքի ազատվելու դեպքում Կողմերը ղեկավարվելու են հետևյալ սկզբունքներով.

- Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանցից ու քաղաքացիներից զորքերի վարձակալած անշարժ գույքը վերադարձվում է Հայաստանի Հանրապետությանը:

Սույն հոդվածով սահմանված դեպքերում անշարժ գույքը Հայաստանի Հանրապետությանը հանձնելու կարգը որոշվում է կողմերի առանձին համաձայնագրով:

Հոդված 13

Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնում թույլ չտալ երրորդ երկրների մուտքը Ռուսաստանի Դաշնության տարածք՝ ի խախտումն Ռուսաստանի Դաշնության օրենսդրության:

Հոդված 14

Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամներին վերապահում է նրանց պատկանող անշարժ գույքի օբյեկտների /բնակելի տներ, ամառանոցային և այգեգործական հողամասեր, ավտոտնակներ և այլն/ սեփականության իրավունքը: Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամներին, որոնք մշտական բնակության են մեկնում Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն է տալիս նրանց պատկանող գույքը ազատ վաճառելու կամ առանց սահմանափակումների նրա սահմաններից դուրս բերելու հնարավորություն:

## Հոդված 15

1. Հայաստանի Հանրապետությունը կապահովի Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամների բնակությունը սույն Պայմանագրի ստորագրման պահին նրանց զբաղեցրած բնակելի տարածությունում:

2. Սույն Պայմանագրի ստորագրման օրը Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձանց բնակելի տարածություն հատկացվում է հերթագրության կարգով:

3. Բնակելի տարածությամբ չապահովված զինծառայողներին բնակարան է հատկացվում զինծառայողների մեկնելու դեպքում ազատվող բնակելի տարածության հաշվին, անկախ նրա գերատեսչական պատկանելությունից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի հրամանատարության վարձակալած բնակելի ֆոնդի հաշվին: Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի հրամանատարությանը իր տարածքում վարձակալման է տալիս բնակելի շենքեր: Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող զինծառայողներին և մյուս անձանց Հայաստանի Հանրապետության կողմից օգտագործման տրամադրված բնակելի շենքերի համար որպես փոխհատուցում Ռուսաստանի Դաշնությունը վճարում է այդ շենքերի պահպանման և վերանորոգման ծախսերը:

Զորքերի հրամանատարությունը Հայկական կողմի համաձայնությամբ կարող է Հայաստանի Հանրապետության տարածքում իր հաշվին կառուցել բնակելի տներ, որոնք դառնում են Ռուսաստանի Դաշնության սեփականությունը:

4. Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերին է ամրացնում երկրի տարածքում նրանց գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում այն բնակելի տարածությունը, որ նրանք զբաղեցնում են սույն պայմանագրի ստորագրման օրը, անկախ նրա գերատեսչական պատկանելությունից:

5. Հայաստանի Հանրապետությունը բնակելի տարածությամբ կապահովի Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող այն անձանց, ովքեր բնակության մշտական վայր են ընտրել երկրի քաղաքներն ու մյուս բնակավայրերը և սույն Պայմանագրի ստորագրման օրը բնակարանային հաշվառման մեջ են գտնվում Հայաստանի Հանրապետության տեղական կառավարման մարմիններում:

6. Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամների զբաղեցրած բնակելի շինությունները կարող են անհատույց նրանց հանձնվել որպես անձնական (մասնավոր) սեփականություն: Բնակելի շինություններին տիրելու ակտը ձևակերպում են տեղական մարմինները` Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

7. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամների գրանցումը և տալիս է բնակության փաստաթուղթ:

## Հոդված 16

Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամների համար կապահովի իր քաղաքացիների իրավունքներին հավասար իրավունքներ բարձրագույն, միջնակարգ և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթություն ստանալու, նախադպրոցական մանկական հիմնարկներ հաճախելու կամ ընդունվելու, բժշկական և սոցիալական ապահովության այլ տեսակների հարցում: Ռուսաստանի Դաշնությունը կփոխհատուցվի Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության Հայաստանի Հանրապետության կատարած ծախսերը: Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության բնագավառում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև փոխադարձ հաշիվների կարգը որոշվում է Կողմերի համաձայնությամբ:

## Հոդված 17

Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամներին, որոնք ծառայություն անցնելու համար մուտք գործելիս կամ ծառայությունն ավարտելուց հետո մեկնելիս հատում են Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, իրավունք է վերապահում իրենց իրերը անցկացնելու առանց սահմանափակումների և տուրքի, հարկերի ու վճարումների գանձման:

ներմուծման և արտահանման վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում գործող կանոնադրությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի, Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամների հարկային, մաքսային ու տարադրամային կանոնակարգերի կիրառման կոնկրետ հարցերը կարգավորվում են հատուկ համաձայնագրերով:

Հոդված 18

Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձինք և նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության պետական սահմանն անցնում են անձը հաստատող վկայականներով (զինվորական տոմսերով) կամ արտասահմանյան անձնագրերով, իսկ անչափահաս երեխաները՝ այդ փաստաթղթերում արված գրանցումներով:

Զինծառայողների և Հայաստանի Հանրապետության տարածք Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերին մատակարարվող սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների տեղափոխությունը, ինչպես նաև ի շահ սահմանի պահպանության դրանց տեղաշարժը Հայաստանի տարածքով կատարվում է անարգել:

Զենքով զինվորական խմբերի, ինչպես նաև սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների տեղաշարժը Հայաստանի Հանրապետության տարածքի սահմաններից դուրս կատարվում է Հայաստանի Հանրապետության շահագրգռված գերատեսչությունների համաձայնությամբ:

Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերին, նրանց կազմի մեջ մտնող՝ անհատական կարգով կամ սահմանապահ զորամասերի, Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ռազմական բեռներ փոխադրելու կարգը, սահմանի կարգավիճակի սահմանումից հետո, որոշվում է Կողմերի համաձայնությամբ:

Հոդված 19

Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի գտնվելու հետ կապված իրավասության հարցերը կարգավորվում են հետևյալ ձևով.

1. Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց կամ նրանց ընտանիքների անդամների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված հանցանքների ու զանցանքների վերաբերյալ գործերի համար որպես ընդհանուր կանոն կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և գործում են տեղական դատարանները, դատախազությունը և հանցանքների ու զանցանքների հետապնդման հարցերում իրավասու մյուս տեղական մարմինները:

Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի զինծառայողների թվից կատարած հանցանքների մասին գործերը քննում են Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները:

2. Սույն հոդվածի 1-ին կետը չի կիրառվում.

ա) այն դեպքում, երբ Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձինք կամ նրանց ընտանիքի անդամները հանցանք կամ զանցանք են գործում Ռուսաստանի Դաշնության դեմ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց կամ նրանց ընտանիքի անդամների դեմ.

բ) այն դեպքում, երբ Ռուսաստանի Դաշնության զորքերի կազմի մեջ մտնող անձինք հանցանք կամ զանցանք են գործում ծառայական պարտականությունները կատարելիս:

Սույն հոդվածի ,,ա,, և ,,բ,, կետերում նշված գործերով ռուսաստանյան իրավասու դատարաններն ու մյուս մարմինները գործում են Ռուսաստանի Դաշնության օրենսդրության հիման վրա:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինները կարող են փոխադարձաբար իրար դիմել սույն հոդվածով նախատեսված առանձին գործերի նկատմամբ իրավասությունը փոխանցելու կամ ընդունելու վերաբերյալ խնդրանքներով: Այդպիսի խնդրանքները կդիտարկվեն բարյացակամորեն:

## Հոդված 20

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի, Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց, ինչպես նաև այդ անձանց ընտանիքների անդամների դեմ հանցանք կատարվելու դեպքում մեղավորները նույնպիսի պատասխանատվություն կկրեն, ինչպես որ Հայաստանի Հանրապետության ու նրա քաղաքացիների դեմ հանցագործությունների համար:

## Հոդված 21

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինները փոխադարձաբար միմյանց ամեն տեսակ, ներառյալ իրավական, օգնություն ցույց կտան սույն Պայմանագրի 19 և 20 հոդվածներում նշված հանցագործությունների ու զանցանքների հետապնդման հարցերում:

## Հոդված 22

1. Ռուսաստանի Դաշնությունը համաձայն է հատուցել այն նյութական վնասը, որ Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կամ նրանց կազմից առանձին անձանց գործողությունները կամ բացթողումները ծառայական պարտականությունները կատարելիս կարող են պատճառել տեղական հիմնարկներին ու քաղաքացիներին կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող երրորդ պետությունների քաղաքացիներին՝ ներկայացված հայցերի հիման վրա սահմանված չափերով և տեղական օրենսդրության կանոնադրությունները հաշվի առնելով: Վնասի չափերի սահմանումը կատարելու է սույն Պայմանագրի 29 հոդվածի համաձայն ստեղծված Խառը հանձնաժողովը:

Վեճերը, որ կարող են ծագել Կողմերի պարտավորություններից, նույնպես ենթակա են Խառը հանձնաժողովի քննարկմանը:

2. Ռուսաստանի Դաշնությունը համաձայն է նաև Հայաստանի Հանրապետությանը հատուցելու այն վնասը, որ պատճառ են Հայաստանի Հանրապետության տարածքում երրորդ պետությունների հիմնարկություններն ու քաղաքացիները՝ Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի անձանց գործողությունների կամ անփութության հետևանքով ծառայական պարտականությունները չկատարելիս, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մարդկանց ընտանիքների անդամների գործողությունների կամ ամփութության հետևանքով՝ վնասը պատճառած մարդկանց ներկայացված հայցերի հիման վրա տեղական դատարանի սահմանված չափով:

3. Ռուսաստանի Դաշնության կողմից վնասի հատուցումը կատարվում է Խառը հանձնաժողովի որոշման ընդունումից կամ դատարանի որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Տուժած անձանց և հիմնարկություններին Խառը հանձնաժողովի կամ դատարանի որոշմամբ գումարի վճարումը կկատարեն համապատասխան տեղական մարմինները:

4. Վնասի հատուցման հայցերը, որ չեն բավարարվել մինչև սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելը, կքննարկվեն Խառը հանձնաժողովի կողմից:

Հոդված 23

1. Հայաստանի Հանրապետությունը համաձայն է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի գույքին, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների թվից Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց, տեղական պետական հիմնարկությունների գործողությունների կամ բացթողումների հետևանքով պատճառված նյութական վնասը հատուցել սույն Պայմանագրի 29 հոդվածի համաձայն ստեղծված Խառը հանձնաժողովի սահմանված չափով:

Վեճերը, որ կարող են ծագել Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի հանդեպ պետական հիմնարկների պարտավորություններից, նույնպես ենթակա են Խառը հանձնաժողովի քննարկմանը:

2. Հայաստանի Հանրապետությունը համաձայն է նաև Ռուսաստանի Դաշնությանը, Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամներին հատուցելու տեղի քաղաքացիների և իրավաբանական անձանց գործողությունների կամ բացթողումների հետևանքով պատճառված վնասը այն չափով, որ սահմանում է տեղական դատարանը վնասը պատճառած անձանց ներկայացված հայցերի հիման վրա:

Հոդված 24

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերն իրավունք ունեն, Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմիններին ծանուցելով՝ պահել և օգտագործել սեփական ռադիոէլեկտրոնային օբյեկտներ ու միջոցներ՝ առանց որևէ տուրք վճարելու և առանց հատուկ գրանցման:

Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերին իրավունք է վերապահում այդ զորքերի գործող ծառայությունների կողմից օգտագործելու ռադիոհաճախականություններ՝ սույն պայմանագրի ստորագրման պահին գոյություն ունեցող կարգին համապատասխան:

Փոխադարձ ռադիոխանգարումներից խուսափելու համար Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ռադիոծառայությունների կողմից ռադիոհաճախականությունների համատեղ օգտագործումը կանոնակարգվում է այդ հարցերի գծով փորձագետների մշտական գործող համատեղ խմբի փոխադարձ պայմանավորվածությամբ:

## Հոդված 25

1. Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի տեղաշարժերը, զորավարժությունններն ու զորախաղերը իրենց տեղաբաշխման վայրերից դուրս անցկացվում են Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ համաձայնեցված պլանների հիման վրա:

2. Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերն իրավունք ունեն տեղաբաշխման վայրերում և տեղաշարժվելիս իրականացնելու ռազմական օբյեկտների պահպանության միջոցառումներ՝ Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերում սահմանված կարգին համապատասխան:

## Հոդված 26

Սույն պայմանագրի դրույթները, մասնավորապես, իրավասությանն ու պատճառված վնասի համար պատասխանատվությանը վերաբերող դրույթները, համապատասխանաբար կկիրառվեն Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ անցնող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի նկատմամբ:

## Հոդված 27

1. Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի զինծառայողները, որ գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, կրում են իրենց համար սահմանված համազգեստ, իրավունք ունեն կրելու և պահելու զենք՝ Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերում սահմանված կարգին համապատասխան:

2. Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ու նրանց հիմնարկությունների ավտոմոբիլային տեխնիկան պետք է ունենա գրանցման համար և հստակ տարբերանշան: Միասնական գրանցման համարներն ու նշանները սահմանվում են Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի հրամանատարության կողմից և հաղորդվում տեղի պետական մարմիններին:

3. Տեղական պետական մարմինները առանց քննության և վճարի ճանաչում են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կազմի մեջ մտնող անձանց՝ նախկին ՍՍՀ Միության և Ռուսաստանի Դաշնության պետական մարմինների կողմից տրված վարորդական իրավունքները:

## Հոդված 28

Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի գտնվելու հետ կապված հարցերի կարգավորման համար Կողմերը նշանակում են Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի գտնվելու գործերի իրենց լիազորները:

## Հոդված 29

Սույն Պայմանագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված հարցերի լուծման համար ստեղծվում է Խառը հանձնաժողով, որի կազմի մեջ Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է իր երեք ներկայացուցիչներին:

Խառը հանձնաժողովը գործելու է իր ընդունած կանոնների հիման վրա:

Խառը հանձնաժողովի գտնվելու վայրը լինելու է Երևան քաղաքը:

Այն դեպքում, եթե Խառը հանձնաժողովը չկարողանա լուծել իրեն հանձնըված հարցը, այն դիվանագիտական խողովակներով լուծման է հանձնվում հնարավորին չափ կարճ ժամանակամիջոցում:

## Հոդված 30

Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և ուժի մեջ է մնում Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի գտնվելու ժամանակամիջոցում: Այն կարող է փոփոխվել Կողմերի համաձայնությամբ:

Սույն Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն: Երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Կատարված է ք. Մ. ,,30,, սեպտեմբերի 1992 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ